

և Ալլահեար բէգ Զիւլքարաբուլին ... երկու անգամն էլ կորստեան մասնուեցին:

Բաղային դրացի Զարգախուս գիւղի հայերը 1905 թուի յարձակումների ժամանակ պաշտում էին Աստծուն, գիտէին և Ալլահեար բէգի տեղը, բայց նրանց ապաւէնն էր «սահման քաջաց՝ զէնք իւրեանց» և կորստեան չմասնուեցին:

1800 թուականին չէր կարելի գուշակել Բաղայի 26 թուի աւերումն, ինչպէս վերջին թուականին անկարելի էր գուշակել 1905 թուի աղէտը: Հետեւեալը չէ կարելի գուշակել և ապագայի արհաւիրքը: Սակայն մի հասարակութիւն, իբրև մի ամբողջութիւն և կազմուած մարդկային էակներից և ոչ անբան անասուններից, պարաւոր է իւր գոյութիւնը, գոյքը և պատիւը պահել և պաշտպանել իւր սեփական միջոցներով և իւր հաւաքական հասարակական սլոքերով, որի համար էլ հարկաւոր է կրթել՝ նախապատրաստել սերունդներ՝ գործելու այդ ուղղութեամբ:

Բայց որովհետեւ երկարագոյն միջոցներում սերունդները կարողանում են մոռանալ մըրկալից անցեալը, ուստի սոյն աշխատութիւնս իւր բովանդակութեամբ Բաղայի ժողովրդի համար թող լինի յուշարար:

**Քաջբերունի.**



### ԿԱՆՏԻ ԻՄԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

#### 3. Քննադատական—իմացաբանական մերոդ.

Ա. Հարցերը դրուած են. արդ՝ ինչպէս է մօտենում կանոնը հարցերին և ինչպիսի ընթացքով է շարժւում նրա մտածողութիւնը:

Կրիտիքական աննախադրեալ և կանխակալ աչառութիւնից (գէպի վերոյիշեալ երեք գիտութիւններից մի որ և է մէկը) բարձր հայեցակէտը իւր դատողութիւնները չպիտի հիմնէ փաստի վրայ և փաստից բղխեցնէ. այսինքն՝ տեսնելով որ իբրև փաստ գոյութիւն ունին այդ գիտութիւնները և կանխաւ ունենալով առաջին երկուսի ճշմարտութեան մասին համոզմունք՝ չպէտք է աշխատի հիմնա-

ւորել նոցա, կամ սկզբից և եթ մերժել մետաֆիզիկան, որովհետեւ նա կանխաւ համոզուած է նրա ճշտութեան կասկածելիութեանը, առաջին երկուսը չպիտի լինին ապացուցութեան նիւթ, վերջինը՝ հերքման. երեքն էլ հաւասարապէս պիտի դառնան քննադատութեան օբեկտ, ինչպէս իրաւացի նկատում է Վինդեյլանդը: Այդ երեք գիտութիւնների փաստն իբրեւ փաստ ոչինչ չի ասում նրանց գոյութեան իրաւացիութեան և ապօրինութեան մասին: Հարկաւոր է նախ և առաջ գտնել, թէ մեր բանականութեան մէջ կան այնպիսի հիմքեր, որոնք դրանց գոյութեան պայմանն են կազմում և արդարացնում են դրանց գոյութեան փաստը:

Մտածութեան այս ընթացքով շարժուելով կրիտիցիզմը առաջին հարցին պատասխանում է. զուտ մատեմատիկան հնարաւոր է, որովհետեւ մենք ունենք զուտ *apriori* հայեցողութիւններ՝ ժամանակ և տարածութիւն, որոնց վրայ է հիմնուած նա (զուտ մատեմատիկան): Երկրորդ հարցին պատասխանում է. — զուտ բնագիտութիւնը հնարաւոր է, որովհետեւ նրա հիմքը կազմող հանրանիշ և ընդհանուր սկզբունքները (կատեգորիաները) բանականութեան *apriori* ձևերն են: Երրորդ հարցին պատասխանում է. — մետաֆիզիկան հնարաւոր կլինէր այն դէպքում, երբ մենք ունենայինք ինտելեկտուալ ինդուկցիա. զգայական իրերը ճանաչելի են, որովհետեւ նոքա մեր զգայական պատկերացողութեան ստեղծածներն են, իսկ ինքնին գերզգայական աշխարհը, որ մտածական (ինտելիգիբլ) առարկաներ են, մտաչելի են մտածական պատկերացողութիւն ունեցող էակի (Սուտուծոյ), որը մտածելիս միաժամանակ և ստեղծագործում է ինտելիգիբլ իրերը, ինչպէս մենք պատկերացումների աշխարհը: Մեր՝ զգայական աշխարհով սահմանափակուած բանականութեան համար մինչև անգամ հարց է այդպիսի ինդուկցիայի գոյութիւնն անգամ: Ուրեմն անհնար է գերզգայական աշխարհի իմացութիւնը՝ մետաֆիզիկան:

Բ. Սակայն կարեւորը, ինչպէս ինքը կանտն էլ յա-



ճախ ասում է. «Բանականութեան քննութեան» մեթոդն է. Դա գնօսէօլոգիական մեթոդն է, որը Կանտը հակադրում է Նախ-Կանտեան փիլիսոփայութեան մետաֆիզիքական կամ հոգեբանական մեթոդին, Կանտին հասկանալու բանալին նրա մեթոդը իւրացնելն է:

Բանականութեան քննութեան ժամանակ Կանտը վերլուծում է այն (բանականութիւնը): — Անալիզը հիմնորոշ բնոյթն է նրա մեթոդի, Բայց դա հոգեբանական վերլուծութիւն չէ, ինչպէս կարծում է Հոֆգինզը (История новой философии): Հոգեբանութիւնը վերցնում է հոգեկան եղելութիւնները իբրեւ ուէալ երևոյթներ, փաստեր և աշխատում նկարագրել նոցա և գտնել նրանց մէջի եղած իրական-պատճառական յարաբերութիւնները, ճիշտ այնպէս՝ ինչպէս բնագէտը վերցնում է արտաքին բնութեան երևոյթները որպէս փաստական բովանդակութիւններ և ինդուկտիւ մեթոդով փնտռում դոցա ուէալ առընչութիւնները: Իսկ Կանտը ժամանակը, տարածութիւնը և կատեգորիաները վերցնում է ոչ թէ իբրեւ հոգեկան իրական եղելութիւններ և ուժեր, և ոչ թէ նրանց ուէալ փաստական բովանդակութիւնն է վերլուծում և փնտռում դրանց իրական կապը, պատճառական առողջութիւնը՝ իրենց ներքին փոխադարձ և արտաքին՝ միւս իրողութիւնների հետ, այլ որպէս գաղափարներ, օրեկտիւ գիտական սկզբունքներ և տրամաբանական անալիզի է ենթարկում: Իմացաբանութեան օրեկտն է գիտութիւնը, ինչ չափով որ նա հիմնուած է apriori սկզբունքների վրայ: Հոգեբանութիւնը, որպէս փորձնական գիտութիւն, գործադրում է պատճառականութեան և այլն apriori սկզբունքներ, առանց իրեն հաշիւ տալու, հրտեղից են դրանք, ինչպէս են նրանք իմացութեան հիմք կազմում, ինչքան կարող է տարածուել իմացութիւնը ևլն. այդ հարցերը, միւս գիտութիւնների նման, նա թողնում է իմացաբանութեանը:

Ոմանք իմացաբանութիւնը համեմատում են անատոմիայի իսկ հոգեբանութիւնը ֆիզիոլոգիայի հետ, այն



հիմամբ, որ իմացաբանութիւնը անատոմիայի նման ծագման խնդրով չի զբաղւում, այլ օրեկտ է վերցնում իմացութիւնը, իբրեւ հոգեկան պատրաստի փաստ և անալիզի ենթարկում, այն ինչ հոգեբանութեան խնդիրն է այդ պատրաստի փաստի յաջորդական ծագումը և զարգացումը նկարագրել: Սակայն այդ վերլուծութիւնն ևս հոգեբանական է, անատոմիայի տեսակէտն էլ հոգեբանական տեսակէտ է: Եթէ մէկը իմացութեան ոչ թէ ծագումը ուսումնասիրէր, այլ վերցնէր այն իբրեւ հոգեկան զարգացման պատրաստի պրօգնակտ և վերլուծէր այդ՝ իբրեւ հոգեկան եղելութիւններ և որ ոչէր այդ պրօգնակտի տարրերի պատճառական կամ օրգանական թէլէօլօգիական կապը, այդ մէկը կը լինէր ոչ թէ իմացաբան, այլ ներկայ մարդու իմացութեան (իբրեւ հոգեկան եղելութեան) հոգեբանը կամ անալիտիկ հոգեբան: Ֆիզիօլօգիան նման է գենետիկ հոգեբանութեանը, իսկ անատոմիան՝ անալիտիկ հոգեբանութեան, բայց ոչ երբէք իմացաբանութեան:

Երբ իմացաբանը խօսում է իմացութեան օրէնքների մասին, խօսքն այդտեղ հոգու բնական օրէնքների մասին չէ, եթէ մէկը օր. պատճառականութեան գաղափարը նկատէր իբրեւ մտքի բնական օրէնք (ինչպէս օրին. արտաքին մեքենայական օրէնքն է), այդ գէպքում նա պատճառականութեան սկզբունքի գործադրութեամբ պատճառականութիւնը աշխատած կլինէր բացատրել (Հիւմի պէս), այսինքն իմացաբանական տեսակէտը փախցրած կլինէր: Այստեղ օրեկտիւ գիտական օրէնքի մասին է խօսքը և ոչ իրական, նման այն բանի, երբ մենք օր. ասում ենք մատեմատիքական օրէնք: Օրէնքը այստեղ տրամաբանական իմաստով է առնւում, այսինքն, ինչպէս Ալօիզ Ռեյն է նրբամտութեամբ ասում, դա օրէնքն է ամեն մտածելիի և առարկայականի ընդհանրապէս:

Կրիտիցիզմը քննադատում և դեդուկցիայի է ենթարկում իմացութեան այդ օրէնքները: Սակայն «քննադատութիւն» գաղափարը կարծէք կապուած է «նորմ»



գաղափարի հետ, իսկ «նորմը» իդէալի հետ. քննադատել և գնահատել, կարծես, կարելի է որոշ նպատակի տեսակէտից միայն: Այս ընթացքով խորհրդածելով, կարծես՝ կարելի է նորմատիւ և թէօլոգիական տարրեր մտցնել իմացաբանական մեթոդի մէջ. եւ Վինդեկբանդը այդպէս է հասկանում՝ կրօնիքական մեթոդը, երբ ասում է, թէ իմացութեան իդէալը պիտի լինի իմացաբանութեան ելակէտը: Սակայն այդ ճիշտ չէ, որովհետեւ նախ՝ իդէալն ինքը ինչպէս է կոչում. — անշուշտ նոյն իմացական սկզբունքների միջոցով. ուրեմն իմացաբանական սկզբունքները կանխում են տրամաբանօրէն իդէալին: Երկրորդ՝ իմացական սկզբունքները դրանով կը դառնան ոչ թէ *apriori* և անմիջական ճշմարտութիւն ունեցող, այլ միայն նպատակայարմար միջոցներ որոշ իդէալի հասնելու: Մինչդեռ իմացական *apriori* սինտետիկ սկզբունքները անմիջականօրէն ճշմարիտ են, անկախ այն հանգամանքից, թէ նրանք կարող են ծառայել որ և է նպատակի և որ և է հետեւանք կունենան: Այս կողմից իմացաբանութիւնը նման է տրամաբանութեանը, մատեմատիկային, տրամաբանական որ և է թէզիս չեն կորցնի իրենց ճշմարտութիւնը, եթէ մինչև անգամ անընդունակ էլ լինէին որ և է նպատակի ծառայելու: Նրանք անմիջականօրէն ճշմարիտ են. ճիշտ է՝ նրանք միաժամանակ և նպատակայարմար միջոցներ են որ և է նպատակի համար, և մինչև անգամ էմպիրիզմի «մտային էկոնոմիզմի» պահանջին էլ բաւարարութիւն են տալիս, բայց դրանք (էկոնոմիան և նպատակայարմարութիւնը) նրանց հետեւանքներից մէկն են, ինչպէս նկատում է Ալօիդ Ռեյը, որոնք ոչ ժխտում են և ոչ հաստատում նրանց անմիջական ճշմարտութիւնը: Հօֆդինդը մինչև անգամ «մտային էկոնոմիզմի» խիստ արտայայտութիւններ է կարծում դանել Կանտի իմացաբանութեան մէջ, բայց նրա ընդհանուր ոգուն խորթ է էկոնոմիզմը, ինչպէս և Վինդեկբանդի նրան վերագրած դէլօլոգիան: Իմացաբանութիւնը բոլորովին ինքնուրոյն է և անկախ



տարասեռ տեսակէաներից։

Նրան ամենից շատ կարելի էր շփոթել իրեն ամենից մօտ գիտութեան՝ տրամաբանութեան հետ, որի հետ միասին իբրեւ ֆորմալ գիտութիւններ նոքա հակադրուած են մատերիալ գիտութեանց։ Կանաւը դրանց ազդակցութիւնը և տարբերութիւնը այնքան ճիշտ է ըմբռնուած, որ զուտ իմացաբանական ընդթ ունեցող խորհրդածութեանց վերնագիրը դնում է լօգիկա. սակայն նրա յատուկ ինքնուրոյն ընաւորութիւնը դատելու համար ընդհանուր տրամաբանութիւնից նա աւելացնում է «տրանսցենդենտալ» բառը, որ այս դէպքում նշանակում է իմացաբանական, և դրանով այն՝ ֆորմալ լօգիկային։ «Ընդհանուր լօգիկան ուշադրութիւն չի դարձնում իմացութեան բովանդակութեան, այսինքն նրա յարաբերութեանը գէպի օրեկտը, այլ զննում է իմացութեանց իրար վերաբերմամբ ունեցած տրամաբանական յարաբերութեանց ձևը, այսինքն մտածողութեան ձևը ընդհանրապէս»։

Նրա համար նշանակութիւն չունի՝ թէ իւր (իմացութեան) բովանդակութիւնը էմպիրիկ է, թէ ոչ, համապատասխանում է իրականութեանը, թէ ոչ, նա հակասութեան օրէնքի հիման վրայ կազմում է դատողութիւններ, որոնք իրապէս նիւթապէս չհամապատասխանեն օրեկտներին, սխալ լինին, բաւական է ճիշտ լինի մտածողութեան ընթացքը, ձևը։ Նա մեթոդոլոգիա է իմացութեան ընդհանրապէս։ Նա վերցնում է պատրաստի տուեալ իմացութիւնը և նրա ձևական կապն է որոշում, առանց հարցնելու, թէ՛ ռիտեղից են դրանք, ինչ է իմացութիւնը և ինչպէս է նա հնարաւոր։ Նա իւր ինդուկտիւ մասում կանխած է ունենում պատճառականութեան սկզբունքը, առանց հետաքրքրուելու նրա ծագմամբ և գործադրութեան սահմանով։ Այդ բոլորը նա թողնում է իմացաբանութեանը, որը աչքաթող չի անում իմացութեան բովանդակութիւնը, ինչ չափով որ նա (իմացութիւնը) կազմուած է apriori սկզբունքներից։ Այսպէս ուրեմն իմացաբանութիւնն ունի իւր սեպհական սահմանը



և ինքնուրոյն տեսակէտը՝ Կանտի կարեւոր գործն այն է, որ նա ստեղծեց այդ գիտութիւնը, դտելով տարասեռ տարրերից, անկախացնելով և տալով նրան «գիտութեան գիտութիւն» պատուաւոր առաջնակարգ տեղը:

Իմացաբանական aprioriութիւնը յաճախ շփոթուում է հոգեբանական բնածնութեան գաղափարին, այդ բանի մէջ յաճախ մեղաւոր է ինքը Կանտը, իւր արտայայտութիւններով, երբ Ա. Լանգէն ասում է, թէ սուրեկտի հոգեբանութեան օրգանիզացիան, իբրեւ ներքին օրէնքներով օժտուած մի որոշութիւն apriori պայմանն է կազմում իմացութեան, և կարծում է, թէ դա Կանտի ոգուն համապատասխան է, և բնութեան բառն աւերացնելով կարծում է, թէ նշանակում է շարունակել Կանտի գործը, — սխալ է. այդ ձևի apriorիզմը նոյնանում է հոգեբանական նատիվիզմին, քանի որ սուրեկտը նկատուում է իբրեւ ժամանակական կանխող ու է ալ պայման, որը իմացութեանը վերաբերում է այնպէս, ինչպէս աչքը եթերի տատանումներին. այսինքն գրանց մէջ կայ իրական—պատճառական առնչակցութիւն և ոչ թէ տրամաբանական:

Մինչդեռ Կանտի apriorիզմը և aposteriorիզմը բոլորովին այլ իմաստ ունի.—apriori են այն սկզբունքները, որոնք գիտութեան՝ իբրեւ այդպիսու հիմքն են կազմում, առանց որոնց հնարաւոր չէ գիտութիւնն իբրեւ օբեկտիւ բան (և ոչ իբրեւ հոգեկան սուրեկտիւ պրօյէկտ), Այդ սկզբունքները կանխում են գիտութեան այն իմաստով, որ ոչ թէ փորձով են ապացուցուում, այլ ընդհակառակն ինքը փորձն է հնարաւոր շնորհիւ այդ սկզբունքների. նրանք ուրեմն գիտական սկզբունքներ են, որոնք չեն հիմնուած փորձի վրայ: Իսկ aposteriori կոչուում են այն իմացութիւնները, որոնք հիմնուում են փորձնական ապացուցութեան վրայ: Ուրեմն apriori և aposteriori տարբերութիւնը հիմնուում է ապացուցական ձևի և հիմնաւորման եղանակի վրայ և ոչ թէ ժամանակական կամ ու է ալ կանխման:

Եթէ ոմանք ապրիորիզմի խնդիրն այդպէս հասկա-




նալով՝ ուղում են մօտեցնել այն՝ էվօլյուցիօնիզմին, այնպէս որ նա չհակասէ էվօլյուցիայի գաղափարին (օր. Սպէնսերի ապրիօրիզմը), նոքա յամենայն դէպս ուղիղ ճանապարհի վրայ չեն կանգնած, որովհետեւ հնարաւոր է աւելի ուղիղ ճանապարհով դրանց միջև թուացող հակասութիւնը վերացնել։ Որ  $2 \times 2 = 4$  և որ փորձը երբէք չի կարող ապացուցել թէ  $2 \times 2 =$  անհրաժեշտաբար 4-ի, սա միշտ էլ կմնայ ճշմարիտ, անկախ այն հանգամանքից, թէ այդ դատողութեան ժամանակ հոգեկան ինչ իրական պրօցէսս է տեղի ունենում և որ հոգեկան պրօցէսսի բաժանդակութիւնը հետզհետէ ինչպէս է դարաւոր էվօլյուցիայի շնորհիւ այս աստիճանի հասնում։ Հոգեբանական-էվօլյուցիօնական տեսակէտը անտարբեր է այս խնդրում, նա ոչ ապացուցում և ոչ հերքում է այդ դատողութիւնն ու անհրաժեշտութիւնը։ Նրանք բոլորովին տարբեր տեսակէտներ են, ուստի իրար չեն կարող հակասել.— ինչպէս որ մատեմատիկոսը հակաէվօլյուցիօնիստական չափի լինի անպատճառ, նոյնպէս էլ իմացաբանը։

Այժմ զինուած կրիտիկայի մեթոդի և ամենաընդհանուր սկզբունքների ճիշտ ըմբռնումով դիմենք սիստեմին և աշխատենք ընդհանուր գծերով միայն ուրուանկարել այն, մանաւանդ, որ միայն ընդհանուր գծերն են, որ այժմէականութիւն ունին։

(շարունակելի)

Ե. Ե.



#### IV.

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՀՈՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անդրկովկասի լեռնականներ ասելով պիտի հասկանալ այն ժողովուրդները, որոնք մեծ մասամբ երկրի լեռնային մասերում են ապրում և որոնց անդամների թիւը միայն մի քանի հազարների է հասնում։ Այս ժողովուրդները վարում են մի տեսակ կէս թափառական կեանք, նահապետական պայմաններում։ Սրանք մեծ մասամբ պարապում են անասնապահութեամբ և